

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀԱՅ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ
СЕКТОР ИСТОРИИ АРМ. МЕДИЦИНЫ И БИОЛ. АН АРМ. ССР

Այսականություններ

№ 2, 1949

Труды

Գ. Հ. ՂԵՎՈՆԴՅԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՈՒՏՈՐ ՄԱՐԴԱՐ ՀԱՎՀԱՆՆԵՍԻ ԱՌՈՒՍԱՄՈՎԸ
(ԱՌՈՒՍԱՄՅԱՆ), ՈՐՊԵՍ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՅՈՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Բժշկականության գործողությունն սկսվել է 1878 թվականից։ Առուստամովը (Առուստամյանը) ծնվել է 1854 թվականին Շուշի քաղաքում, չբավոր ընտանիքում։

Նրա բժշկական գործողությունն սկսվել է 1878 թվականից։ 23 տարուց ավելի նա իր գործողությունը, որպես բժիշկ և հասարակական գործիչ, կապել է Խուսաստանի արդյունաբերական կապիտալիզմի զարգացման հետ։

Ավարտելով Թիֆլիսի գիմնազիան, նա հաղթահարում է նյութական դժվարությունները և ընդունվում Պետերբուրգի Ռազմաբժշկական ակադեմիան։

1878 թ. նա, ուսումն ավարտելով, որպես բժիշկ, վերադառնում է Շուշի, որտեղ աշխատում է տեղական զինվորական հիվանդանոցում։ Վեց տարի անընդհատ Առուստամովը մնում է իր հայրենիքում և այդ ժամանակաշրջանում, բացի բժշկությամբ զբաղվելուց, նա ցուց է տալիս իր ամենացայտուն հատկությունները, որպես հասարակական գործիչ։ Հասարակական գործունեության համար ցարական առմինիստրացիան 1884 թ. նրան աքսորում է Կովկասի սահմաններից դուրս։ Առուստամովը մեկնում է Պետերբուրգ, որտեղ զրադվում է բժշկականության գոկտորի աստիճան ստանալու համար դիսերտացիայի վրա։

Հասնելով իր նպատակին, Մ. Առուստամովը 1889 թ. նշանակվում է Աստրախանի ձկնորսարանների բժիշկ։ Նա առաջինն էր, որ իր շրջապատողների ուշադրությունը դարձրեց բանվորների կյանքի

և աշխատանքի վատթար պայմանների վրա, որի հետևանքով արժանացավ ձկնարդյունաբերողների թշնամական վերաբերմունքին: 1892 թ. նա ակտիվ մասնակցեց խոլերայի դեմ պայքար կազմակերպելու գործին: Այս ասպարեզում իր անդուզ և անկաշառ աշխատանքով առաջավոր մարդկանց համակարանքն ու սերն էր վայելում: Խոլերայի համաճարակի լիկվիդացիայից հետո՝ նա կառավարության հանձնարարությամբ մեկնեց Իրան՝ գիտականորեն ուսումնասիրելու ժանտախտի հետ կապված հիմնական պայմաններն ու պատճառները:

Առուատամովի այս ճանապարհորդությունն ուներ շատ մեծ նշանակություն հետագայի համար, քանի որ նա առաջինն էր, որ մանրամասն քննության ենթարկեց Իրանի ամենահեռավոր և խոչ անկյունները: Այս գիտարշավի հետևանքը հանդիսացավ նրա գիտական աշխատությունը, որն արժանացավ մասնագետների շատ մեծ գովասանքին: Իրանից վերադառնալուց հետո՝ նա, որպես սահմանադրական տեսուչ, գլխավորեց Աստրախանի Բժշկական ընկերության առաջավոր անդամներին և համառորեն առաջ տարավ իր գիծը՝ կենսագործելով մի շարք կարևոր բարենորդություններ ձկնորսարանների բանվորների կենցաղի ու աշխատանքի պայմանների վերաբերյալ:

Բժիշկ Առուատամովի հասարակական դեմքը բնութագրելու համար հարկավոր է համառոտակի վերլուծության ենթարկել նրա աշխատանքի միջավայրը, ինչպես նաև այն ժամանակվա բժշկականության վիճակը:

«Բանվորների և գյուղացիների գլխին կանգնած էր իսպրավ-նիկների, ուրյադնիկների, ժանդարմների, ոստիկանների, ստրաժնիկների մի ամբողջ քանակ, որոնք պաշտպանում էին ցարին, կապիտալիստներին, կալվածատերերին ընդդեմ աշխատավորների, ընդեմ շահագործվողների:»

«Մինչև 1903 թվականը գյուղացիում ունեին մարմնական պատիժները Զնայած ճորտատիրական իրավունքի վերացման, գյուղացիներին ճիպոտահար էին անում ամենափոքրիկ զանցանքի համար, տուրքերը չվճարելու համար: Բանվորներին ծեծում էին ոստիկանությունն ու կազակները, մանավանդ գործադուկների ժամանակ, երբ նրանք դադարեցնում էին աշխատանքը, չդիմանալով ֆարբիկանտների ճնշումներին: Բանվորները և գյուղացիները քաղաքական ոչ մի իրավունք չունեին ցարական Ռուսաստանում: Ցարական ինքնակալությունը ժողովրդի ամենաօխներիմ թշնամին էր:»

«Ճորտատիրական իրավունքը վերացվելուց հետո՝ արդյունաշ-
թիրական կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում բավական
արագ ընթացավ, չնայած ճորտատիրության մնացորդներին, որոնք
դեռ կասեցնում էին այդ զարգացումը:

«ՀՀ տարվա ընթացքում, 1865-ից մինչև 1890 թվականը, միայն
խոշոր ֆարբիկաններում, գործարաններում և երկաթուղիններում
բանվորների քանակն ավելացավ և 706 հազարից հազար 1.433 հա-
զարի, այսինքն՝ ավելի քան կրկնապատկվեց»: (Համամիութենական
Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի պատմություն, էջ 6—7,
Հայպետհրատ, Երևան, 1946 թ.):

Այս փոնի վրա առողջապահության գործը ցարական Ռուսաս-
տանում ամենանմխիթար վիճակումն էր գտնվում: Նահանգներում
և մարզերում գոյություն ուներ բժշկական տեսչի գլխավոր վարչու-
թյուն, որին՝ օրենքի համաձայն՝ վերապահված էր բժշկական հըս-
կողության բնագավառում վարչական իշխանությունը: Բայց բժշկա-
կան տեսչությունները փաստորեն ոչ մի ռացիոնալ առաջարկ չենն
կարողանում իրականացնել, որովհետև նահանգներում գոյություն
ուներ ինքնակալության շահերը պաշտպանող մի իշխանություն՝
հանձինս նահանգապետների, որոնք ամեն կերպ աշխատում էին
սահմանափակել բժշկական ընկերությունների իրավունքներն ու
գործունեությունը:

Դրանից զատ նահանգներում գոյություն ունեին բազմաթիվ
հիմնարկներ, որոնք անձեռնմխելի էին թե նահանգապետի և թե
բժշկական տեսչի իշխանության համար:

Եթե մենք վերհիշենք ցարական Ռուսաստանի բիոգիական
գիտությունների զարգացման պատմությունը, ապա կհամոզվենք,
որ մատերիալիստական աշխարհայցը գերակշռող դեր է կատա-
րել: Սա պետք է անշուշտ բացատրել նրանով, որ ցարական Ռու-
սաստանում շատ ուժեղ էր ռեռլուցիոն դեմոկրատների՝ Դերցենի,
Բելինսկու և Զերնիշևսկու ազդեցությունը ինտելիգենցիայի վրա,
որի լավագույն խավերը ավելի կարճ ժամանակաշրջանում ճշտո-
րեն յուրացրին Դարվինի ուսմբնքը:

Պետք է, անշուշտ, շեշտել նաև այն հանգամանքը, որ ոռու
մեծ գիտնականներ Սեվերցովի, Բեկետովի, Սելենովի ու Պավլովի
աշխատությունները ինքնուրույն ճանապարհներով առաջ տարան
ընության օրենքների ուսումնասիրությունը, քննադատորեն յուրաց-
նելով դարվինիզմը:

Այս բանի հետևանքով ցարական Ռուսաստանի մի քանի առաջավոր գոմիշկների իրենց սեփական նախաձեռնությամբ կարողացան տեղական զեմստվոյական ինքնավարություններում ստեղծել բուժական և սանիտարական աշխատանքների յուրահատուկ ձևեր։ Նման հասարակական գործիչների հատկությունը ունեցան առաջավոր բժիշկների մի շարք ներկայացուցիչներ, որոնց անձնագործ աշխատանքների հարուստ փորձը ժառանգություն մնաց սովետական իշխանությանը։ Այս խմբին են պատկանում ականավոր բժշկական հասարակական այնպիսի գործիչներ, ինչպես Կուրկինը, Տեղյակովը, Պոժդակովը, Սեմաշկոն, Սոլովյովը, Պոդովը, Բոգուլավսկին և ուրիշները։ Բժ. Առուստամովը, անշուշտ, պատկանում է այս խմբին և իր ամբողջ գործունեությամբ, որպես սանիտարական բժիշկ Աստրախանում, կենսագործել է այդ դրույթները։

Մեր նպատակն է, այս կարճ հոդվածում բնութագրել Առուստամովի դեմքը, որպես իր ժամանակի ակտիվ հասարակական գործչի, որպես որակյալ սանիտարական բժշկի, որպես ցարական էպոխայի 19-րդ դարի ինտելիգենցիայի փայլուն ներկայացուցչի, որպես բժշկական գիտական մտքի հեղինակավոր անձնավորության, որի բարոյական դեմքը այնքան բարձր է գնահատել ուստայտնի գրող Վ. Կորոլենկոն։

Առուստամովը 19-րդ դարի վերջերին հանդես եկավ որպես զեմստվոյական բժշկականության ականավոր գործիչ, որն իր բոլոր շանքերն ի սպաս գրեց Աստրախանի Զենարդյանաբերության բանվորների կենցաղի և աշխատանքի պայմանները բարելավելու գործին։ Բժիշկ Առուստամովը, որպես խոշոր հասարակական գործիչ, հանդես եկավ մի շարք ուսակցիոն բժիշկների՝ Շմիդտի և Կրաబվիշտ հետ ունեցած ընդհարումների ժամանակ։ Այստեղ Առուստամովը՝ հանդես բերեց իր առաջադիմ գործունեության ամբողջ թափն ու կորուվը։

Ո՞րն էր այդ բուռն ջնդհարման հիմնական պատճառը, Բժիշկ Շմիդտը գրել ու հրատարակել էր իր կեղծ գիտական աշխատությունը, այսպես կոչված «Կապույտծովյան» ձկնորսարանների սանիտարական վիճակի մասին։ Այդ աշխատությունն իր հերթին առաջարեց բուռն վեճեր, քանի որ բժիշկ Շմիդտը իր ելույթով բացահայտ պաշտպանում էր խոշոր ձկնարդյունաբերողների շահերը։

Այս առթիվ հանդես գալով տեղական մամուլում, դոկտոր Առուստամովը գրում էր. — «Հարկավոր է, ինչ գնուվ էլ լինի, կանխել

նման շարիքները, որոնց նպատակն է կոծկել ձկնորսարանների վատթար սանիտարական վիճակը. չէ՞ որ այս հարցը վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ մեծաբանակ բանվորներին և կապված է նրանց աշխատանքի և կենցաղի հետ:

Մենք պետք է բոլոր միջոցները գործադրենք, որպեսզի ապացուցնեմ բժիշկ Շմիդտի սառցարանների սանիտարական վիճակի ոչ ճիշտ լուսարանումը:

Խոսնելով բժիշկ Շմիդտի դերի մասին, որին նա համարում է գործարանատերերի հլու գործակալը, Առուտամովը հանդես է բերում իր քաղաքական մտածելակերպը: Նա ասում է.— «Ձկնարդյունաբերությունը, ինչպես և ամեն մի արդյունաբերություն, բաղկացած է երկու ֆակտորից՝ կապիտալից և բանվորի աշխատանքից: Կապիտալի պայքարը բանվորական ուժի դեմ տարվում է ամբողջ արտադրության ընթացքում՝ կապ չունենալով բնության պատահականությունների հետ: Այս պայքարում իշխում է պահանջի և առաջարկի դաժան օրենքը և մրցումը»:

«... Այս մրցումը ցարական օրենսդրության պայմաններում ստուգում է ավելի այլանդակ ձևեր, եթե մեկը ավելի վարպետորեն է շահագործում բանվորին, ապա նա ի վիճակի է իր շահերի համար «օրինական» պաշտպաններ վարձել և հենց դրանով արտադրության ասպարեզից դուրս վանել ավելի պակաս ճարպիկին: Այս օրինական պաշտպանի գերն իրենց վրա են վերցրել բժիշկ Շմիդտը և նրա համախոհները»:

Առուտամովի և Շմիդտի ընդհարումն ուներ մեծ հասարակական նշանակություն: Այս էր պատճառը, որ բժշկական ընկերության անդամների մեծ մասի համակրանքը Առուտամովի կողմն էր: Բժշկական ընկերության նախագահը՝ ամփոփելով վիճաբանությունները, պաշտպանում է Առուտամովին: Բնորոշ է, որ տեղական մամուլն ստիպված էր պաշտպանել Առուտամովին և իր համարներից մեկում արհամարհանքով խորհուրդ էր տալիս Շմիդտին «Ասմեկել բրոշյուր գրել «Կապույտծովյան» ձկնորսարանների մասին»:

1892 թվի հունվարի 15-ի տեղական թերթում «Անմեղ ճառեր» վերնագիրը կրող հոդվածի մեջ մի անհայտ հեղինակ գրում է.— «Բժշկական ընկերության անդամները շնորհակալություն են հայտնում Առուտամովին այն բանի համար, որ նա բացեց մեր ընկերության աշխերը, նկարագրելով ձկնորսարանների սանիտարական վիճակի իսկական պատկերը: Թե որքան մեծ է Առուտամովի մատու-

ցած ծառայությունն այս հարցում, կարող է հասկանալ միայն նա, ով զբաղվել է ժողովրդական առողջապահության հարցերով և ով իսկական պատկերացում ունի այդ հարցերում ճշմարտությունը ճանաչելի դարձնելու դժվարությունների մասին»:

«Այս բոլոր հարցերը պարզաբանման կարիք ունեն ոչ թե լոկ հետաքրքրության համար, ոչ թե հանուն այն բանի, որ թուղթ մրուտողները, ինչպես արտահայտվում էր հանճարեղ Գոգոլի հերոսներից մեկը այն ժուռնալիստների մասին, որոնք շանում են ավելորդ առիթ ունենալ գրելու մի քանի սենսացիոն տողեր, խղճովկ, բայց գեղեցիկ բառերի հավաքածու, այլ նրա համար, որպեսզի արթնացնեն հասարակական փակությունը և հիշեցնեն այն ֆակտորների մասին, որոնք ապականում են ժողովրդի ֆիզիկական և բարոյական օրգանիզմը»:

«Երկրորդ՝ հետաքրքրականը և ուսանելին, որ դրսեորվեց Առողջապահության վեճի ժամանակ, այն է, որ հասարակական կյանքում հայտնաբերվեցին մասնագետների մեջ եղած մտքերի հակասությունները։ Տվյալ վեճի ժամանակ դրսեորվեցին երկու հակառիք ուղղությունների մեջ երևան են բերում ծայրահեղ զգուշություն, հայցքների ապացուցում և հարգանք դեպի առարկայի գիտական ուսումնասիրման իսկական մեթոդները, մյուաները բնորոշ են մեծ հանդրգնությամբ, բայց դրա հետ միասին վերին աստիճանի թեթևամիտվերաբերմունքով դեպի հետազոտման գիտական մեթոդները»:

Ավելի պարզ և որոշակի չէր կարող գրել հոգվածագիրը, որն անանուն էր հանդես եկել, եթե նկատի ունենանք ցարական իշխանության ցենզուրան:

Ինքը Առողջապահության «Աստրահանskie ведомости» թերթի № 704-ում գրում է. «Ծմիդտի բրոցյուրի երևան գալը շափազանց ցավալի եղրակացությունների է հանդեցնում։ Ինչպես կարելի է օրը ցերեկով այսպես աղավաղել ամբողջ գործի իսկական դրությունը, որը կարիք ունի արմատական բարելավումների, կոծկել այնպիսի հասարակական խոցերը, որոնք այլանդակում են մեր ամբողջ ձկնարդյունաբերությունը։ Բայց ես կասեմ՝ ավելի լավ է խոցերը բացել և բուժել, քան թաքցնել նրանց»։

Սույն թերթի մյուս համարում Առողջապահությունը գրում է. — «Կառավարական շրջաններում այս օրերին վճռվում է 70.000 բանվորների բախտը։ Փորձեր են արվում նոր սանիտարական կանոններ՝ մտցնել ձկնորսարաններում և այս կարեոր ու վճռական պահին».

Հրամցվում է անգրագետ բժիշկ Շմիդտի կազմած բրոշյուրը, որտեղ ձևարարանների սանիտարական վիճակն ու բանվորների աշխատանքի և կենցաղի պայմաններն այնպիսի վարդագույն գույններով է ներկայացված, որը բոլորովին չի համապատասխանում իրականությանը:

Բժիշկ Առուստամովի այսպիսի վերաբերմունքը պատահական չէր: Որպես ժամանակի առաջավոր բժիշկ, նա չէր կարող չգտնվել ուստական ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչների ազգեցության տակ:

Զարգացող արդյունաբերությունն իր հերթին առաջ քաշեց մի շարք խիստ կարևոր հարցեր, այն է՝ քաղաքներում կուտակված բանվորական մասսաների առողջապահության հարցերը, որոնք պետք է իրենց լուծումն ստանային: Այս հարցերը քննվում էին մի շարք հասարակական հիմնարկներում, որոնց թվին էին պատկանում զեմստվոն և Պիրոգովյան ընկերությունը: Առուստամովը ակտիվ մասնակցություն ցուցաբերեց հիշյալ հիմնարկներում: Այսպես, 1897 թվի նոյեմբերի 19-ին նա հանդես եկավ լայնածավալ զեկուցումով հլորպական Ռուսաստանի զեմստվոյական և ոչ զեմստվոյական նահանգներում գոյություն ունեցող բժշկա-սանիտարական գործի վիճակի մասին:

Զեկուցումից պարզվեց, որ առողջապահության գործը ամենաանմխիթար վիճակում է, Հայտնի դարձավ, որ յուրաքանչյուր 500.000 գյուղական բնակչությանն ընկնում է միայն 10 բժիշկ: Առուստամովը նահանգապետ գններալ-լեյտենանտ Գաղենկամպֆի ներկայությամբ համարձակ բացատրություններ է տալիս, հայտարարելով, որ օկրուպներում աշխատող բժիշկները գյուղեր չեն գնում, որի հետևանքով ֆելդշերական պոնկտերը ոչ ոք չեն ստուգում, ֆելդշերների համար նախատենաված աշխատավարձը շատ փոքր է և այդ պատճառով նրանք աշխատանքի չեն գնում:

Առուստամովին հաջողվում է ապացուցել, որ զեմստվոյական նահանգներում բժշկական օգնությունն ավելի լավ է կաղմակերպված, որ այնտեղ բժշկական օգնությունն ավելի մոտ է բնակչությանը, որ այդ նահանգների բնակչությունը գտնվում է բժիշկների ավելի ուժեղ հսկողության տակ, որ զեմստվոն հնարավորություններ ունի առողջապահության գործն ուժեղացնելու և լայնացնելու

Մեղ համար պետք է միանգամայն հասկանալի լինի, որ Առուստամովն իր աշխատանքներում, որպես զեմստվոյական բժշկության պաշտպան և կաղմակերպիչ չէր կարող հաջողություններ

ուղենալ, եթե նա չունենար ժամանակակից սանիտարական առաջավոր բժշկի ճիշտ գորովթյուրը:

Մանոթանալով Առուտամովի գործունեությանը, գալիս ենք այն եղակացովթյան, որ, հանձին Առուտամովի, Աստրախանի նահանգն ուներ սանիտարական գործի ասպարեզում աշխատող մի խոշորագույն մասնագետ:

Այս միտքն ապացուցելու համար բերենք մի քանի օրինակներ նրա գործունեովթյունից:

Այստեղ կարելի է հիշատակել մի քանի դեպքեր, որոնք բնորոշում են նրան, որպես կառավարության լիազորի Աստրախանի ձևնորսարաններում:

Սանիտարական տեսակետից առանձնապես վատ էին մի քանի ձևնորսարաններ: Առուտամովը գործ հարուցեց նրանց տերերի դեմ, բայց անսպասելի հարուցվեցին մի շարք խոշընդոտներ: Բանից գործ եկավ, որ ձևնորսարանների տեր Սապոժնիկովան, սենատի 1884 թվի որոշման համաձայն, ազատ է քրեական հետապնդումից: Այնուհետև պարզվեց, որ Սապոժնիկովայի հավատարմատար Ստեպան Նիկոլաևը ոչ մի լիազորություն չունի և իրեն համարում է Շասարակ ծառայող», իսկ ձևնորսարանի բժիշկ Կուլակովը, որպես Շահագրգովված» անձ, ցուց տվեց, որ ձևնորսարաններում ամեն ինչ լավ է: Զնայած այս խոշընդոտներին՝ Առուտամովին հաջողվեց ապացուցել Նիկոլաևի մեղավոր լինելը, որի հետևանքով վերջինս 10 օրով կալանքի տակ առնվեց, իսկ ձևնորսարանում անցկացրին մի շարք միջոցառումներ:

Բժիշկ Կուլակովը փորձեց բժշկական ընկերության տարեկան ժողովում զրպարտել Առուտամովին, սակայն վերջինիս հեղինակությունն այնքան բարձր էր և տարած աշխատանքը այնքան ակնբախ, որ բժշկական ընկերությունն իր որոշման մեջ ստիպված եղավ նշել, որ Կուլակովը հանդես է գալիս որպես արդյունաբերողների շահերի պաշտպան: Գտնվեցին անհատներ, որոնց թվում նաև փաստաբաններ, որոնք փորձեցին ապացուցել, որ հակասանիտարական վիճակի համար չի կարելի ձևնարդյունաբերողներին պատասխանատվության ենթարկել: Այս հողի վրա վեճ բացվեց Խլեբնիկովի և Առուտամովի միջև, ընդ որում հաղթանակը մնաց վերջինիս կողմը: Առուտամովի հակառակորդների թիվը տարեց տարի ավելանում էր: Որպես ուսակցիոն ուժերի ներկայացուցիչ, հանդես է գալիս կենդանաբանական գիտությունների դոկ-

տոր Գրիմմը՝ Սա հանդես եկավ սանիտարական հսկողություն սահմանելու դեմ:

Գրիմմի բրոշուրը տպագրվեց և տարածվեց և նրանից զանազան քաղվածքներ բերվեցին տեղական և մայրաքաղաքի թերթերում: Այս հոդվածը հասարակության մեջ որոշակի և սխալ հայցքներ, տարածեց սանիտարական աշխատանքների դերի մասին:

Զկնարդյունաբերողների օրգան՝ ռեհակցիոն ուժերի կազմակերպիչ Վետնիկ ըստորոշությունում թերթը գրում է.— «Փուլ ենք տալիս մեզ հարցնելու՝ սանիտարական բժիշկների ի՞նչ դորձն է, թե ձկնորսարանների պահեստների կախարանների վրա ինչ բանակի փտած ձուկ է գտնվում:

«Դատարան քարշ տալ արդյունաբերողներին այն բանի համար, որ պահեստներում վորլան վատորակ է, միանգամայն անհեթերթություն է. որտե՞ղ է սահմանը լավ ու վատ և փշացած ապրանքի միջև Այդ սահմանը որոշել չի կարելի, որովհետև մի բան, որ ուս մարդու համար առողջարար է, գերմանացու համար մահ է: Հարց է տրվում՝ ո՞րն է բժիշկների շափանիշը փշացած ձուկը որոշելու համար: Այդպիսի շափանիշ չկա: նշանակում է սանիտարական բժիշկները զեկավարվում են ոչ որի համար ոչ պարտադիր սուբյեկտիվ նշաններով, և մենք այսպիսով կարծում ենք, որ ավելի լավ է այդպիսի որոշումը թողնել հենց իրենց սպառողներին: Ամեն մի սպառող ավելի լավ կորոշի ապրանքի նեխածովելյան աստիճանը, քանի որ աստված նրան տվել է և քիթ, և խելք, և քանի որ միլիոնավոր սպառողները նույնքան քիթ ունեն, իսկ սանիտարական բժիշկը միայն մեկ քիթ: Ես ավելի շուտ կհավատայի միւնքն սեփական քթերին, քան մեկ օտար քթին, թեկուզ և այդ լինի սանիտարական»:

Ավելի սանձարձակ և լկտի հայտարարություններ չեր կարելի սպասել Գրիմմից:

Առուտամովը հանդես եկավ մամուլում և կրակ քացեց Գրիմմի գեմ իր Շնեխված ձուկը և կենդանաբանության դոկտորը» վերնագիրը կրող հոդվածով: Այստեղ նա գրում է.— «Դժվար չէ պատկերացնել՝ ինչպես համակրելի և սիրելի պետք է լինի նա՝ Գրիմմը, Աստրախանի ձկնարդյունաբերողներին, և դժվար չէ հասկանալ, թե ինչպիսի զգացմոնք պետք է առաջացնի նա սպառողների մեջ: Ի՞նչ արած, այդպիսին է կենդանաբանության դոկտորի պատճառաբանությունը»:

Մի այլ ավելի կարևոր ասպարեզում Առուտամովվը դրսկորեց հասարակական գործին հատուկ տվյալներ Անհրաժեշտ է լուսաբանել Առուտամովի դերը նաև խոլերայի դեմ մղած պայքարում: Նրա հերոսական աշխատանքն այս գործում մանրամասն նկարագրել է Հայտնի ոռու գրող Վ. Կորոլենկոն: Մեծանուն գրողի այս պատմվածքը կոչվում է «Խննը ֆուտանոց ոելյի կարանտին»: Հեղինակը սուր ծաղրի է ենթարկում ցարական իշխանության միջոցառումները խոլերայի դեմ մղվող պայքարում:

Նահանգական բժշկական վարչության բյուրոկրատիկ ապարատը՝ բժիշկ Կրակիչի գլխավորությամբ՝ հասցրեց այն բանին, որ նավակայանում, որտեղ կազմակերպված էր «հղողացիան», ճանապարհորդները լացուկոծ էին բարձրացրել, բողոքներ ու անեծքներ էին թափում: Բազմահազար ճանապարհորդները գտնվում էին մեծաքանակ և քայլավող դիակների մեջ, մթերապաշարի բացարձակ բացակայության պայմաններում, մի հանգամանք, որի մասին իշխանությունը բոլորովին չէր հոգացել:

Վ. Կորոլենկոն իր պատմվածքի մեջ բերում է Առուտամովի գեկուցումից մի քանի նմուշներ: «Դրությունն այնպես էր, որ իրենք բժիշկները շտեսնված պայմաններում հիվանդներին մակույկներով հիվանդանոց էին տեղափոխում, որովհետև մակույկների անձնակազմը վախից հրաժարվում էր օգնել բժշկական անձնակազմին: Պետք է, բժիշկներն իրենք հանեին հիվանդների հագուստը, փոխեին նրանց հագուստները և այս բոլորը ամենապրիմիտիվ պայմաններում, երբ հիվանդները պառկած էին խոտի վրա, մեկը մյուսին կից կպած: Հարկավոր էր, որ բժշկական անձնակազմը, որի քանակը շատ նենշան էր, ամեն բոպե հետևեր, որ հիվանդներն ամեն ինչով ապահովված լինեին»:

«Մայրաքաղաքի թերթերի թղթակիցներից մեկը՝ նկարագրելով մի քանի էպիզոդներ, զարմանք էր հայտնում, թե ամբոխը ինչու դատաստան շտեսավ իշխանության կողմից լքված Առուտամովի հետ:

«Այս հարցի պատասխանը բավականին պարզ է: Բժիշկ Առուտամովը հարգանք էր ներշնչում իր արտասովոր արիությամբ ու անձնազորությամբ. պատվով կատարեց իր այսպես կոչված «իղողացիան» միսիան: Փողովուրդը ներում էր իր ասանիտարական բանտապետին», տեսնելով, որ այդ մարդը ինքն էլ ցարական կարգերի գոհն է, քանի որ իշխանությունը մատը մատին չէր խփում ստեղծված իրադրությունը բարելավելու համար»:

«Հասկանալի է, — գրում է Վ. Կորուենկոն, — որ բժիշկ Առուստամովի և այդ ամբողջ շոկատի կատարած գործը վեր է ամեն մի գովասանքից:

«Հետագայում մենք այդ կամպանիայի կապակցությամբ կարդացինք հրամաններ պարզեատրումների և շնորհակալությունների մասին, սկսած պարոնայք նահանգապետից մինչև ծովային հրետանու արդեն հիշատակված պրապորշիկ Դլավլիցկին, որին պարզմատրեցին լապտերներն ու դրոշներն արագ պատրաստելու համար:

«Խոլերայի ժամանակ դես ու դեն փախած նահանգապետների կողմից դոկտոր Առուստամովին պարզեատրելու կամ թեկուզ շնորհակալություն հայտնելու մասին՝ մենք ոչինչ չենք հիշում: Այն ինչ, երբ բոլոր լապտերները կցարդվեն ու բոլոր դրոշները կուղնանան, դոկտոր Առուստամովի և նրա ընկերների անունները կանցնեն հասարակայնության պատմության մեջ, որպես իսկական հերոսության օրինակ:»

«Բժիշկ Առուստամովը շպարզեատրվեց: Ընդհակառակը, Աստրախանի բժիշկների ընկերության նիստում դոկտոր Առուստամովը ստիպված էր արդարանալ պարոն Կրակիչի մեղադրանքների դեմ, որ իբր թե նա, Առուստամովն է խոլերան ներս թողել Աստրախան: Երբ վիճարանությունների ժամանակ պարզվեց «Ծննդ Փուտանոց օբսերվացիայի» ամբողջ 22մեցուցիչ պատմությունը, այստեղ ևս պարոն Կրակիչը չլողեց բյուրոկրատական ինքնավստահությունը, նրա ասելով՝ մեղավոր են բոլորը, բայց ոչ աղմինիստրացիան:»

Պարոն Կրակիչի ասելով՝ ինքը Առուստամովը չէր հասկացել հրամանները, անդիմշնստրացիան նկատի ուներ միայն «օբսերվացիոն» պունկտ, իսկ հետեւանքը եղավ այն, որ տեղում կազմակերպեցին «կարանտին»:

Տարակուած բժիշկների հարցին, թե ինչ պետք է աներ Առուստամովը, ներ ճիշտ հասկանար հրամանները, Կրակիչը պատասխանեց, որ նա հիվանդներին պետք է տեղափոխեր, իսկ շոգենավերն ուղարկեր Բաքու Կրակիչի այս սրատասխանը վկայում էր, թի որքանով նա «համապատասխանում է» իր պաշտոնին:

Այսպես է Աստրախանի խոլերայի ցավալի պատմությունը:

Բայց և այնպես բժշկական հասարակայնությունն ուրիշ կերպ էր մտածում: Այսպես, 1900 թվականի հունվարի 20-ին Աստրախանի առաջավոր բժիշկները մեծարեցին իրենց ընկերության նախագահին՝ Առուստամովին խոլերայի դեմ պաշքարի համար երկու

անգամ կատարած ուղևորությունից բարեհաջող կերպով վերադառնալու առիթով։ Նույն թվի հոմվարի 22-ին՝ «ԱՇՏ» աշանկա և առօս առաջարկ մի հոդված Առուստամովի աշխատանքների մասին։ Հոդվածի մեջ ասված է, որ ընկերները նրան հայտնում են իրենց «հարգանքը նրա արդյունավետ գործունեության համար։ Առուստամովի հաջողությունները նրանք վերագրում էին նրա շիտակությանը, ազնվությանը, որոնց օգնությամբ նա միշտ ու ամենուրեք արտահայտում է իր հայացքները, հաշվի չառնելով ոչ հանգամանքները և ոչ կը անձնավորությունները»։

Բժիշկ Առուստամովի ակտիվ, եռուն և շափազանց օգտակար գործունեությունը չէր կարող արժանի գնահատական շտանալ բժշկական հասարակայնության կողմից։ Մենք հարկ ենք համարում Առուստամովի աշխատանքի, դերի ու նշանակության մասին եղած բազմաթիվ արտահայտություններից մեջ բներել մի քանի օրինակներ։ Նրա մահից հետո ընկերները գրում էին. — «Ի՞ր գործունեությամբ հանգուցյալը կողմնակից էր լայն հիգիենիկ ու սանիտարական միջոցառումների։ Դեպի իր ընկերներն ունեցած վերաբերմունքի մեջ, որպես բժշկական տեսուչ, հանգուցյալն այսքան ազնիվ էր, որ վայելում էր ընդհանուրի համակրանքը։ Իր քնավորությամբ նա սրտաբաց մարդ էր և հակված հասարակական գործունեության։»

Կորդին, նրա մոտիկ ընկերներից մեկը, 1901 թվի նոյեմբերի 6-ին գրում էր. —

«Մինչև Առուստամովը ձկնորսարանների սանիտարական վիճակի, առանձնապես բանվորների կենցաղի որևէ ուսումնասիրության մասին խոսք չի եղել և չէր կարող լինել, որովհետև Կասպյան ձկնորսարանների կոմիտեում մասնակցում էին ձկնարդյունաբերության ռտուղերը» և ոչ մի կերպ չէին համաձայնում թույլ տալ բժիշկներին միշամտելու իրենց ձկնորսարանների ռտնտեսական գործերին։ Ով հիշում է հանգուցյալին, նրա գեղեցիկ, կենսուրախ, միշտ զվարժ, խելացի և սրամիտ, ուժեղ կերպարանքը, հաստատուն քայլվածքը, նրա գրավիշ ձայնը, օրիգինալ ակցենտով, նա միանգամայն կհասկանա, որ ձկնորսարանների վարչության բոլոր պաշտոնյաների վրա նա ամենախիստ տպավորությունն էր թողնում։

«Այդ տաղանդավոր, միշտ խելացի ու սրամիտ մարդը, մաքուր խղճով, որ չգիտեր շողոքորթության խոսքեր, մեջքը չէր

ծոռում և պնակալեզություն չէր անում ուժեղների առաջ, չի կարու մոռացվել նրանց կողմից, ովքեր գիտեին նրան:

«Դրա համար առանձնապես յավալի է, որ քանի գնում, այնքան ավելի քիչ ենք տեսնում այդպիսի հասարակ, շատ գիտցող բայց այդ գիտելիքներով շգոռողացող, այդպիսի համեստ ու ընդունակ մարդկանց»:

1902 թվի հունվարի 5-ին Աստրախան քաղաքի բժշկական ընկերությունը հատուկ հանձնաժողով ընտրեց, որին հանձնարարեց հավաքել Առուստամովի բոլոր աշխատությունները: Ընկերությունը որոշեց նրա բոլոր գիտական աշխատությունները հրապարակել առանձին գրքով:

Առուստամովի գիտական ծառայությունը, մասնավորապես ձկան թույնի ուսումնասիրությունը, մեծ ծառայություն է մատուցել մարդկությանը:

Դոկտոր Առուստամովը իր մեծ փորձն ու գիտությունը նվիրեց «ձկան թույնի» ուսումնասիրության: Այդ ուղղությամբ նա անդուզ և համառ աշխատեց մոտ 12 տարի:

Նա առաջինն էր, որ կազմեց «ձկան թույն»-ին վերաբերող բիբլիոգրաֆիան: Ժամանակակից բակտերիոլոգները բազմիցս շեշտել են այս կարևոր աշխատության արժեքը:

Բազմակողմանի ուսումնասիրելով «ձկան թույնը», Առուստամովը համարձակորեն հայտարարեց, թե գիտության կողմից ընդունված դրույթը, որ «ձկան թույնը» լոկ օրգանական բաղադրություններ են, չի համապատասխանում իրականության: Նա պնդում էր, որ «ձկան թույնը» հատուկ միկրոբների առկայության հետևանք է: Հայտնի է, որ միայն 1895 թ. գիտնական Վան-Էրմինգեմը վերջնականապես ապացուցեց «ձկան թույնի» մեջ միկրոբների գերբ: Այսպիսով, դոկտոր Առուստամովն իր հայացքներով առաջավոր դիրքերումն էր գտնվում: Կարելի է ասել, որ այս հարցում նա պիոներ է եղել:

Իր զրույթներն ապացուցելու համար նա ներկայացրել է իր գիտական աշխատանքները թե՛ Պետերբուրգում և թե՛ Փարիզում հայտնի գիտնական Մելնիկովին:

Դոկտոր Առուստամովի մահվանից հետո՝ 1904 թ. հողագործության մինիստրության հատուկ հանձնաժողովը, որը կազմված էր ժամանակակից ականավոր ակադեմիկոսներից և պրոֆեսորներից (Կրավկով, Օվսյանիկով, Զիստովիչ) մանրամասն քննելով նրա «ձկան թույնին» նվիրած աշխատությունը, որոշեց նրան մեծարել

այդ գյուտարարության համար և արժանացնել դրամական պրեմիայի:

Առուստամովի արխիվում կան մի շաբթ աշխատություններ, որոնք լույս են վնծայվել մինչև նրա մահը: «Զեկան թույնին» նվիրած նրա ընդարձակ և շատ կարևոր աշխատությունը մինչև հիմա չի մահաց: Վերջերս մի քանի մասնագետների կողմից հարց է հարուցված տպագրության հանձնելու այդ աշխատությունը, նկատի ունենալով նրա խոշոր նշանակությունը բժշկականության համար:

Նա թողել է հետեւյալ աշխատությունները.

1. «Կրուպոզ պնեվմոնիայի բակտերիոլոգիայի մասին» (գիսերտացիա). 2. «Տիֆային պնեվմոնիայի մասին». 3. «Զեկան թույնի բնույթի մասին». 4. «Կոլորուվկայի ժանտախտը», 5. «Կիրգիզական տափաստանի ժանտախտը». 6. «1892 թվի խոլերան Աստրախանի նահանգում», 7. «Բժշկական օգնության կազմակերպումը ձկնորսարաններում», 8. «Պայքար խոլերայի դեմ», 9. «Զեկնորսարանների սանիտարական վիճակի մասին», 10. «Բորոտության մասին», 11. «Վուգայի ջրի քիմիական հետազոտությունը», 12. «Դեպի Սեխստան կատարած ճանապարհորդության մասին» և ուրիշները,

Մինչ վերջին ժամանակները ոչ մի հաստատություն չի հետաքրքրվել մոտակա անցյալի ականավոր գործիչների կյանքով: Ուսումնասիրություններն այս ասպարեզում ցույց են տալիս, թե որքան արժեքավոր են այն հետևողական ներք, որին մենք կարող ենք հանգել, եթե մեր հիմնարկները և առաջին հերթին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Բժշկականության և Բիոլոգիայի պատմության Սեկտորը ավելի լայն շափով զբաղվի այդ հարցերով:

Մեր համառոտ ակնարկը Առուստամովի կյանքի ու գործունեության մասին հիմք է տալիս մեզ անելու հետեւյալ եզրակացությունները.

1. Մանրամասն ժանոթանալով ձկնորսարանների սանիտարական վիճակի մասին՝ Առուստամովը միաժամանակ ուսումնասիրնեց ձկան թույնի էպիդեմիոլոգիան, որը մեծ ծառայություն մատուցեց բժշկական գիտությանը:

2. Անհրապույր ցարական ռուսական իրականությունը, որի հետ շփվելիս շատերն են թևատվել, ընկճվել, Առուստամովին, ընդհակառակը, ակտիվացրեց, որովհետև նա հաստատ համոզված

Էր, որ լայն սանիտարական-առողջապահական միջոցառումները պետք է անպայման օգտավետ լինեն ժողովրդի լայն խավերին:

3. Առուտամովվ բացափկ եռանդով ընդունեց զեմստվոյական-հասարակական բժշկականության հիմունքները: Բանվորների դաժան շահագործումը ձկնորսարաններում և մյուս բանվորական վայրերում դարձավ նրա աշխատանքների զլիավոր խնդիրը. Իր ամբողջ էությամբ նվիրվեց բանվորների աշխատանքի և կենցաղի պայմանների բարելավման գործին: Կարելի է վստահորեն հայտարարել, որ Առուտամովվ, որպես բժիշկ, կարողացավ բանվորական միջավայրում ծավալի իր ուժերը: Նա իր գիտելիքներն ու կարողությունն ի սպաս դրեց ժողովրդի շահերին: Այդպիսի բժիշկը կարող է իրավամբ կոչվել հասարակական բժիշկ: Մեծ են Առուտամովի գործերը, այդպիսի մարդկանց շեն մոռանում:

Г. А. ГЕВОНДЯН

ДОКТОР МЕДИЦИНЫ МАРКАР ИВАНОВИЧ АРУСТАМОВ, КАК ЯРКИЙ ПРЕДСТАВИТЕЛЬ ПЕРЕДОВОЙ МЕДИЦИНСКОЙ ОБЩЕСТВЕННОСТИ РОССИИ ВТОРОЙ ПОЛОВИНЫ XIX ВЕКА

Доктор медицины Маркар Иванович Арутамов (Арутамян) родился в 1854 г.-на Кавказе и происходил из бедной армянской семьи. Прекрасно одаренный от природы, он вначале учился в городском училище в г. Шуше, затем в Тифлисской гимназии, окончив которую он поехал в Петербург и поступил в Военно-медицинскую академию. По окончании академии в 1878 г. Арутамов был назначен военным врачом в г. Шушу, где работал при местном военном лазарете. Здесь в Шуше он оставил о себе неизгладимую память не только как отзывчивый врач, но и как общественный деятель. Его общественная деятельность среди местного населения обратила внимание царской администрации, и он в 1884 г. был выслан за пределы Кавказа. После этого Арутамов отправился в Петербург, где защитил диссертацию на степень доктора медицины. В 1889 году он был назначен старшим врачом на астраханские рыбные промысла.

В 1892 году в Астрахани разразилась эпидемия холеры.

Арустамов был назначен руководителем организации по борьбе с этой болезнью. После ликвидации эпидемии холеры Арустамов был командирован в Персию для обследования эпидемиологической обстановки в связи с распространившимися слухами о появлении там чумы.

Работая на рыбных промыслах в Астрахани, Арустамов приложил много труда для организации врачебной общественности против реакционеров, официальных представителей губернского врачебного инспектора. Понадобилась огромная энергия, чтобы преодолеть стоявшие перед ним препятствия. Он вдохнул в жизнь врачебного общества Астрахани свою глубокую убежденность в правоте прогрессивных идей.

Как представитель санитарной организации, доктор Арустамов с большой настойчивостью начал ожесточенную борьбу с рыбопромышленниками против вопиющего антисанитарного состояния промыслов, игнорирования интересов рабочих и потребителей, и пр. Мероприятия Арустамова восстановили против него рыбопромышленников и их прислужников и агентов; они натравили на Арустамова реакционно настроенных врачей—Шмидта и Краевича. Последние выпустили брошюру о якобы благополучном санитарном состоянии «синеморских» промыслов, беззастенчиво скрывая от общественности вопиющие недостатки и крайнее антисанитарное состояние общежитий рабочих. Арустамов выступил в прессе с резким опровержением этих заявлений.

Вопрос этот, принявший нежелательное для доктора Шмидта направление, сделался предметом обсуждения в Обществе врачей, где врачебная общественность энергично поддержала Арустамова.

Желая во что бы то ни стало дискредитировать и опорочить общественника-врача Арустамова и тем самым заставить его покинуть промысла, рыбопромышленники прибегли к помощи реакционера, доктора зоологии Гrimма. Гrimm выступил в прессе со специальной статьей против санитарных врачей, проявив при этом исключительное тупоумие. Он писал: «Тянуть в суд промышленника за то, что у него на вешалках вобла безусловно дурного качества—есть абсурд. Где граница между хорошим и худым товаром? Эту границу определить

нельзя, ибо что русскому здорово, то для немца смерть. Спрашивается, где же у врачей критерий для определения вредного рыбного товара? Такого критерия нет. Всякий потребитель лучше определит степень гнилости товара, так как ему господь дал и нос, и разум, и так как у миллионов потребителей столько же носов, а у санитарного врача только один нос, то я скорее положился бы на миллион собственных носов, чем на один чужой, хотя бы санитарный».

Арустамов открыл форменный огонь против Гrimма, подвергнув уничтожающей критике невежественную и реакционную концепцию этого своеобразного «ученого».

Авторитет Арустамова рос из года в год. Передовые врачи видели в нем решительного поборника за улучшение условий труда и быта рабочих и на очередном собрании они его избрали председателем Общества врачей города Астрахани.

Следует особо отметить роль доктора Арустамова в борьбе с холерой. Известный литератор В. Короленко в статье «Карантин на девятифутовом рейде» едко осмеивает «мероприятия» царской власти по борьбе с холерой; одновременно он красочно описывает подвиг доктора Арустамова.

Губернские власти направили доктора Арустамова на борьбу с холерой, но бюрократический аппарат губернского врачебного правления во главе с доктором Краевичем своими мероприятиями позаботился создать такие условия, что на рейде, где была организована «изоляция», происходили ужасные сцены: плач, жалобы и проклятия здоровых пассажиров, находящихся, при абсолютном отсутствии провиантов, вместе с больными и с разлагающимися трупами, оглашали воздух.

В своем рассказе В. Короленко приводит выдержки из доклада доктора Арустамова. «Необходимо было самим врачам снимать больных со шхун и поместить в больнице, ибо команда шхун и пассажиры отказывались помогать в этой работе. Врачи вынуждены были сами раздевать больных, обмывать их, переодевать и переносить их. Надо было ежеминутно обеззараживать извержения больных»...

Один из корреспондентов столичных газет, описывая некоторые эпизоды этой «изоляции», удивляется, почему толпа не расправилась с доктором Арустамовым. Объяснить это не

трудно: доктор Арустамов импонировал своим необыкновенным мужеством и самоотвержением при исполнении своей «изоляционной» миссии. Народ прощал своего санитарного «тюремщика», видя, что этот человек сам—жертва царских порядков (Корсленко).

«Разумеется, поведение доктора Арустамова и всего этого передового отряда стоит выше всяких похвал. Впоследствии мы читали в связи с этой холерной кампанией, много приказов о наградах и благодарностях, начиная с г. г. губернаторов и кончая прaporщиком морской артиллерии В. И. Главацким, которого Н. М. Баранов печатно благодарили за «быстрое изготавление фонарей и флагов». «А между тем, когда все фонари разобьются и истреплятся все флаги, имена доктора Арустамова с товарищами должны перейти в богатую историю русской общественности, как пример истинного героизма, который, однако, на службе у бессмысленных чиновничих усмотрений оказался не только бесплодным, но прямо гибельным и вредным» (Короленко).

Доктор Арустамов награжден не был. Наоборот, на заседании общества врачей Арустамову пришлось оправдываться против обвинений Краевича, будто он, Арустамов, инструкции не понял: администрация имела в виду только «обсервацию», а в результате получился «карантин». На вопросы изумленных врачей, что в сущности должен был делать доктор Арустамов, если бы правильно понял инструкцию, Краевич, без смущения ответил, что он должен был снимать больных, а пароходы отправлять обратно в Баку. В этом ответе, как в зеркале, отразились бюрократическая самоуверенность и невежество власти. Такова печальная история Астраханской холерной эпидемии.

Однако, передовые врачи думали иначе: 20 января 1900 года они чествовали председателя общества врачей Маркара Ивановича Арустамова по случаю благополучного возвращения его из двукратной поездки на борьбу с холерой.

В 1902 году, после смерти Арустамова, Общество врачей города Астрахань избрало особую комиссию, которой поручено было издание трудов Арустамова, среди которых имелись

весьма ценные научные изыскания, посвященные различным вопросам патологии, гигиены и микробиологии.

Все изложенное дает основание сделать следующие выводы: М. И. Арутамов с исключительной эрудицией воспринял опыт организации общественной медицины. Жестокая эксплуатация рабочих на рыбных промыслах стала для него «проклятым вопросом»; он, как врач-гуманист, сумел в этой среде развернуть свои силы и применить свои огромные знания и энергию в борьбе за прогрессивные идеи в медицине. Заслуга Арутамова заключается в том, что он, благодаря своим личным качествам, проявил подлинные свойства врача-общественника, дающие ему возможность рассматривать вопросы здоровья рабочего в свете растущего самосознания рабочего класса конца XIX столетия.